



Visa Concierge

Concierge ծառայությունը Visa վճարային համակարգի կողմից Visa Signature քարտապաններին տրամադրվող ծառայություն է, որը հնարավորություն է տալիս արագ և առանց ջանքերի լուծելու առօրյա խնդիրները: Concierge ծառայությունը հարմար է հատկապես ճանապարհորդությունների կազմակերպման համար, քանի որ այն տրամադրում է համապարփակ սպասարկում ճանապարհորդության ողջ ընթացքում:

Աշխարհի ցանկացած կետից հեռախոսով կամ առցանց 24/7 սկզբունքով քարտապաններին հասանելի են Concierge-ի կողմից մատուցվող բազմաթիվ ծառայություններ, մասնավորապես՝ թռիչքների, հյուրանոցների, ռեստորանների ամրագրում, մեքենաների վարձույթ, ճանապարհորդության պլանավորում և այլն:


Concierge ծառայության մատուցումը անվճար է Visa Signature քարտապանների համար: Վճարում կատարվում է միայն Concierge ծառայության միջոցով պատվիրված ապրանքների ու ծառայությունների դիմաց:

Concierge ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է օգտվել VisaConcierge Chatbot ծառայությունից կամ զանգահարել +380 (44) 300 05 07 հեռախոսահամարով:


VisaConcierge Chatbot-ը թույլ է տալիս Visa Signature քարտապաններին տեղեկանալ քարտի բոլոր արտոնությունների մասին մեկ վայրում: Միացնելով Chatbot-ը Բանկում Ձեր հիմնական հեռախոսահամարով գրանցված Viber կամ Telegram հավելվածներից որևէ մեկում՝ Դուք կարող եք ունենալ օնլայն օգնական, որը թույլ է տալիս կապ հաստատել Concierge ծառայության հետ և օգտվել առաջարկվող տարատեսակ ծառայություններից: Viber կամ Telegram հավելվածներից օգտվելու համար առաջին հերթին անհրաժեշտ է օգտագործել հետևյալ QR կոդերից որևէ մեկը՝






Visa Concierge Chatbot Viber հավելվածում*




1


Viber հավելվածի QR կոդը անմիջապես կտանի Viber հավելված, որտեղ պետք է սեղմել  Sign up:

 Sign up-ից հետո պետք է սեղմել հեռախոսի  նշանի վրա և ստանալ SMS կոդ, որը պետք է մուտքագրել համակարգ: Այնուհետև պետք է ընտրել երկիրը՝ Armenia .

2




3




Հաջորդիվ պետք է ընտրել լեզուն՝ անգլերեն 🇺🇸 կամ ռուսերեն 🇷🇺, հետո նշել Ձեր անունը և այնուհետև ծանոթանալ Chatbot-ի պայմաններին և տալ համաձայնություն:

4

Այնուհետև անհրաժեշտ է ընտրել այն ծառայությունը, որը Ձեզ անհրաժեշտ է (օր.՝ Visa Travel 🛫):




5




🔔 Concierge ծառայությունը ընտրելու դեպքում, Դուք հնարավորություն կունենաք Ձեզ հետաքրքրող հարցերը ուղղել ծառայության աշխատակիցներին, ովքեր Ձեր հարցերին կպատասխանեն 24/7 սկզբունքով:


6

📞 Support 360⁰ ծառայությունը ընտրելու դեպքում, Դուք հնարավորություն կունենաք Ձեր հարցերը ուղղելու ծառայության մենեջերին:




7




 Visa Offers ծառայությունը ընտրելու դեպքում, Դուք հնարավորություն կունենաք ծանոթանալ առաջարկվող բոլոր առավելություններին անցնելով նշված հղումով:

8


 Visa Travel ծառայությունը ընտրելու դեպքում, Դուք հնարավորություն կունենաք ընտրելու հետևյալ ծառայությունները՝

1. Agoda -12%
2. Avis up to - 35%
3. Lounge Key
4. Insurance

Վերոնշյալ ծառայություններից որևէ մեկը ընտրելու դեպքում Դուք կարող եք ծանոթանալ այդ ծառայության պայմաններին և ներկայացվող առաջարկներին:





 PCR test ծառայությունը ընտրելու դեպքում, անհրաժեշտ է նշել նաև քարտի տեսակը՝ Visa Signature և Դուք հնարավորություն կունենաք օգտվել տարվա ընթացքում 1 անգամ անվճար ՊՇՌ-թեստ հանձնելու հնարավորությունից:

* Telegram հավելվածում VisaConcierge Chatbot ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է կատարել Viber հավելվածի դեպքում կատարվող քայլերը: